Զկնի անցանելոյ Տամաց այսմ հրովարտակի, քայքայեցաւ և անկաւ արտաքին որմն արեւմտեան վանաց Ս. Յակոբայ. միաբանք ժամանակին իբրեւ ձեռն արկին զայն վերստին չինել և կանգնել, ընդ դէմ կացին այլազգիք քաղաքին, և ոչ ետուն թոյլ նոցա առնել զոր կամէին, որոյ վասն հարկ եղեւ միաբանաց գիր աղաչանաց մատուցանել առ Սուլթանն և առնուլ հրաման վասն այնր, որպէս եւ արարին իսկ. բայց սկիզբն հրովարտակիս 'ի հնութենէ էր թերի։

Վարդապետք, քահանայք և սարկաւագունք Երուսաղէմի մատուցին գիր աղաչանաց յատեանս մեր, յորում ասէին՝ թէ ունիմք վանս Ս. Յակոբ, ուր ժողովին ուխտաւորք և այլք 'ի քրիստոնեայ ազգէն Հայոց, այժմ կործանեալ է որմն նորին, յորմէ հանդիպեցաք ծանր և մեծամեծ վնասուց յերեսաց դողոց և աւազակաց, և զչինութիւն նորին արգելին. Սուլթանն ետ Հրովարտակ 'ի ١٣ Շաբան ամսոյ, ١٧٤٠ (1339) և նոքա չինեցին զայն ըստ առաջին կերպի։

Հարկահանք Եգիպտոսի բռնացեալ 'ի վերայ վանօրէից, տագնապէին զնոսա, խնդրելով հարկս և ցորեան. չհանդուրժեալ միաբանաց ազգ արարին զնեղութիւնս իւրեանց առ ազգայինս Եգիպտոսի, և Մարիամ անուն կին ոմն, փութաց օգնել նոցա որոյ որդին Յակոբ սիրելի լեալ էր յաչս Սուլթանաց, և առեալ Հրովարտակ 'ի Սուլթանէն, որ կոչի Մէլիք Աշրաֆ Սէյֆի և առաքեաց յԵրուսաղէմ, յորում պատուիրէ դատաւորաց և գործավարաց, և ամենայն ումեք, որք միանգամ տեսանիցեն զհրովարտակն, դադարիլ 'ի բռնութենէ, չպահանջել հարկս եւ ցորեան 'ի քրիստոնէից բնակելոց 'ի վանս Ս. Յակոբայ. եւ չհնարել նորանոր սովորութիւնս և դրկանս։ Վերջին հատուածք բանից մաշեալ էր և եղծեալ, որով և թուականն պակասի։

Ի Պատրիարքութեան Երուսաղէմի Վասլի եպիսկոպոսի, այլազգի դռնապանք տաճարին Ս. Յարութեան պահանջէին հարկս 'ի ժողովրդոց եւ յեկեղեցականաց յելանելն և 'ի մտանելն նոցա յեկեղեցին։ Թէպէտ բազմիցս ջանացին քրիստոնեայք բառնալ զայդպիսի նեղութիւնս, սակայն